



THE ARMENIAN CHURCH OF THE HOLY RESURRECTION

1910 Stanley St., P.O. Box 1080 New Britain, Conn. 06050

Church 223-7875 Residence 225-1115

Rev. Fr. Vartan Der Assadourian, Pastor

Դեկտեմբեր 22, 1981

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ-Եորք
-----:

Սիրելի Սրբազան Հայր,

Այս նամակը գրած եմ Ձեր Թելադրանգին
հետեւելով: Կիրակի, Մայիս 9, 1982 ին տեղի ունե-
նալիք պատարագի երգեցողութեան ներդաշնակու-
թիւնն ու միօրինակութիւնը ապահովելու համար
կարելորդ նկատած էիք մարզուած սարկաւազներ
ուսնենալու պարագան:

Ուստի, զայս իբրեւ յիշեցում Ձեր ուշադրու-
թեան կը յանձնեմ եւ կը խնդրեմ որ զարժանն
տնօրինէք:

Շնորհակալ պիտի ըլլամ եթէ ըլլալիք կար-
գադրութեանց մասին տեղեակ պահուիմ:

Մնամ որդիական ակնածանօք եւ մատչելով
ի համբոյր Ձեր Ս Աջոյն,

Արքեպիսկոպոս Թորգոմ Արքեպիսկոպոս
Վարդան Բհնյ. Տ. Ասատուրեան



THE ARMENIAN CHURCH OF THE HOLY RESURRECTION

1910 Stanley St., P.O. Box 1080 New Britain, Conn. 06050

Church 223-7875 Residence 225-1115

Rev. Fr. Vartan Der Assadourian, Pastor

Նոյեմբեր 9, 1981

Բարձրաշնորհ
ՏԹորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ-Եորք:

Սիրելի Սրբազան Հայր,

Հարտփրտի Ս Գէորգ եկեղեցին Ամերիկեան

Ծնունդի առթիւ Դեկտեմբեր 24ի երեկոյին մաս-
նաւոր պաշտամունք մը պիտի կատարէ եւ կը փափա-
քին որ մենք ալ մեր մասնակցութիւնը բերենք:

Մեր պատասխանը այն եղաւ թէ Առաջնորդ Սըր-
բազանին կը գրենք, եթէ արտօնութիւն տայ, կը
մասնակցինք, այլ ապէս ոչ:

Հաճեցէք ներփակ գտնել Անգլերէն օրինակը
այդ առթիւ տեղի ունենալիք արարողութեան:

Ապասելով Ձեր բարեհաճ պատասխանին,

Մնամ որդիական ակնածանօք եւ մատչելով
ի համբոյր Ձեր Ս Աջոյն,


Վարդան ԲՆՆՅ.Տ Ասատուրեան

Հովիւ

Թիւ 28141
Մարտ 23, 1988

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. ՔՆՆյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք տեղեկագիրները համայնքիդ ժխական ժողովին, որ ձեր նախա-
կահութեամբ գումարուած է Յունուար 80, 1988ին:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք իւրով Առաջնորդարան դրձել ժխական Խորհուրդի նորընտիր դի-
ւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք ժխական Խորհուրդի նոր կազմը եւ ձեզի ու ձեր պաշտօնակից-
ներուն կը սաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը՝ ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցնալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունք

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Սարգիս Երիկեան
Մանդի Պաղտիկեան
Պեարոս Պաղտիկեան
Հէրրի Տէր Ասատուրեան



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ԹԻԼ 28530
Մարտ 14, 1984

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. Քհնյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք Փետր. 21, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունվ. 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի նոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տանըլտ Ագարիկեան
Հարրի Պատրիկեան
Ժան Զիլոյեան
Վաչէ Տէր Ասատուրեան
Պաղտասար Յովհաննէսեան

Թիւ 28708
Օգոստոս 17, 1984

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. ԹԳՆՄ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ա. Յարութիւն Սկեզեցույ
Նիւ Դրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Կը խնդրենք որ խափ ըլլաք մեզի որպէս սկեզեցույ տարածական փոխ-
գաղութան զծագութիւնը:

Ընտրակալ կ'ըլլանք եթէ առաջին առիթով ընկա՞ցք տուի մեր ախ
խնդրանքին:

Սիրելի զոյնիւ

ԹԱՐՎԱՄ ԱՐՇԱԳԻՍՆՈՐՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28750

Սեպտեմբեր 7, 1984

Արժանաշնորհ

Տ. Վարդան Ա. Քինյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Եխական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Նկատի ունենալով որ Հայ Ժողովուրդին վիճակուած ցեղասպանութեան 70-ամեակն է յաջորդ տարի, պաշտօնապէս ``1985-Ը Մեծ Եղեռնի ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏԱՐԻ`` կը յայտարարենք:

Այս որոշումը տրուած է գլխաւորաբար վայել յարգանքը մատուցանելու համար մեր բիւրաւոր նահատակներուն՝ որոնք իրենց կեանքը զոհեցին որպէս զի Հայ Ժողովուրդը ապրի պատուով եւ ճակատաբաց, եւ նոյն ատեն յատուկ ձեռնարկներով ու ոգեկոչման հանդիսութիւններով փառաբանելու համար բազմաչարչար Հայ Ժողովուրդի հրաշալի վերածնունդը:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ առնուած որոշումին համաձայն՝ մեր փափաքն է որ մեր համայնքները, բոյր յարանուանութիւնները, ինչպէս նաեւ մշակութային, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններն ու կազմակերպութիւնները բերեն իրենց մասնակցութիւնը այն ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ, որ որոշուած է կազմել:

Այս գրութեամբ հրաւէր կ'ուղղենք ձեզի եւ կը խնդրենք որ բարեհաճիք համայնքիդ կողմէ մէկ ներկայացուցիչ մը դրկել առաջին խորհրդակցական հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի Սեպտեմբեր 25, Երեկոյեան ժամը 7.30ին, Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Բարի եղէք ձեր ներկայացուցիչին անունը տեղեկացնել Առաջնորդարանի տնօրէն Տիար Մեսրոպ Գերմեանին՝ հեռաձայնելով Առաջնորդարանի գրասենեակը, մինչեւ Սեպտ.20, 1984:

Մեր նահատակներուն բարի յիշատակը յարգելով՝ անգամ մը եւս մենք ուխտած կ'ըլլանք հաւատարիմ մնալ մեր պատմութեան, հաւատքին, ժողովուրդին եւ Մայր Հայրենիքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻԿՍՈՊՈՍ
Առաջնորդ



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28735
Սեպտեմբեր 7, 1984

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. Քհնյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Նկատի ունենալով որ Հայ ժողովուրդին վիճակուած ցեղասպանութեան 70-ամեակն է յաջորդ տարի, պաշտօնապէս ``1985-Ը Մեծ Եղեռնի ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏԱՐԻ`` կը յայտարարենք:

Այս որոշումը տրուած է գլխաւորաբար վայել յարգանքը մատուցանելու համար մեր բիւրաւոր նահատակներուն՝ որոնք իրենց կեանքը զոյեցին որպէս զի Հայ ժողովուրդը ապրի պատուով եւ ճակատաբաց, եւ նոյն ատեն յատուկ ձեռնարկներով ու ոգեկոչման հանդիսութիւններով փառաբանելու համար բազմաշարժար Հայ ժողովուրդի հրաշալի վերածնունդը:

Թեմական խորհուրդի նիստին մէջ առնուած որոշումին համաձայն՝ մեր փափաքն է որ մեր համայնքները, քոյր յարանուանութիւնները, ինչպէս նաեւ մշակութային, բարեսիրական եւ հայրենակցական միութիւններն ու կազմակերպութիւնները բերեն իրենց մասնակցութիւնը այն ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՒՆ, որ որոշուած է կազմել:

Այս գրութեամբ հրաւեր կ'ուղղենք ձեզի որ բարեհաճիք մասնակցիլ առաջին խորհրդակցական հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի Սեպտեմբեր 25, երեկոյեան ժամը 7.30ին, Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Մեր նահատակներուն բարի յիշատակը յարգելով՝ անգամ մը եւս մենք ուխտած կ'ըլլանք հաւատարիմ մնալ մեր պատմութեան, հաւատքին, ժողովուրդին եւ Մայր Հայրենիքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ձիւ 28781
Սեպտեմբեր 20, 1984

Արժանաշնորհ
Տ. Վարդան ՁՏ ՔԻՆՂ. Տէր Ասատուրեան
Նիւ Դիքսըն.

Սիրելի Տէր Վարդան,

Աստղած ենք ձեր նամակը եւ եկեղեցւոյդ նահապետաց ճանգպատան գծագրու-
թիւնը, որուն նամար կը յաջանենք մեր շնորհակալութիւնը:

Այսպիսով օգտակար ծառայութիւն մը մատուցած կ'ըլլաք մեր թեմին մէջ
կազմակերպուած համայնքի մը:

Ձեզի կը մտղթենք քաջատողջութիւն եւ ձեր եկեղեցանուէր գործերուն յա-
ջողութիւն:

Սիրոյ ողջունք

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՂԻՍՎԱԳՈՍ
Առաջնորդ

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

ՆԻՒ ՊՐԻԹԸՆԻ

ՆԻՒ ՊՐԻԹԸՆ. ԲԸՆ.

Tel. 223-7875 Church Office
225-1115 Residence



Rev. Fr. Vartan Der Assadourian, Pastor

THE ARMENIAN CHURCH OF
THE HOLY RESURRECTION

1910 Stanley Street
P.O. Box 1080
New Britain, Conn. 06050

Օգոստոս...25.....19 84

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց, յԱմերիկա.

Սիրելի Սրբազան Հայր,


Ի պատասխան Ձեր Օգոստոս 17 թուակիր նամակին, հաճեցէք ներփակ գտնել
եկեղեցւոյ վնասատակաց Ձանգակատան գծազրութիւնը:


Ներփակ պիտի գտնէք նաեւ եկեղեցւոյս օծման գիրքէն օրինակ մը, որուն մէջ
էջ 22-28 ին, կճերելի եկեղեցիի ընդհանուր յատակագիծը:

Կը յուսանք ներփակ գծազրութիւնը օգտակար պիտի ըլլայ Ձեզի:

Եթէ յաւելուածական տեղեկութեան պէտք ըլլայ, կարելի է դիմել ճարտարա-
պետին, որուն անունն ու հասցէն տպուած է գծազրութեան վրայ:

Մնամ որդիական ակնածանօք եւ մատչելով ի համբոյր Ձեր Ս Աջոյն,


Վարդան ԲՏՆՅ. Տ. Ասատուրեան



Քի. 28875
Յունուար 20, 1985

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. ՔՏՆյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն սկսողեցւոյ
Նիւ Դրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Ժամանակին ստացած ննք Դեկտեմբեր 20, 1984 թուակիր ձեր նամակը,
որով մեզ կը հրաւիրէք այցելել ձեր համայնք:

Տրուած թուականներէն մեզի համար յարմարագոյն թուականը 1985
Սեպտեմբեր 14-15ի շաբաթակերչն է, յուսալով որ ՝Ուան Ուելլա ֆէս-
թիվալը՝ նոյն շաբաթակերչին համար պիտի չծրագրուի:

Բարի կղեր նկատի ունենալ յիշեալ թուականը, եւ ժամանակին մեզ
տեղեակ պահել յիշեալ կարգադրութեանց մասին:

Սիրոյ ողջունիւ

ՅԱՐԳՈՄ ԱՐՏԵՂԻՍԿՈՒԳՈՍ
Արաշնորհ



THE ARMENIAN CHURCH OF HOLY RESURRECTION

11 Irwin Place New Britain, Connecticut 06051
Church Hall 223-7875 Residence 225-1115
Rev. Fr. Vartan Der Assadourian, Pastor

Դեկտեմբեր 18, 1984

Բարձր աշնորհ
Տ.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց, Ամերիկայի
Նիւ-Եորք:

Սիրելի Սրբազան Հայր,

Նկատի ունենալով եկեղեցւոյս 44րդ տարեդարձի առթիւ տեղի ունենալիք հանդիսութիւններն ու ծաշկերոյթը 1985 մէջ, այժմէն իսկ գործի լծմեծ ենք:


Արդ, այսու գրուեամբ կը հրաւիրենք Ձեր Սրբազանութիւնը մեր պատուոյ հիւրը ըլլալու եւ նախագահելով տեղի ունենալիք հանդիսութեանց եւ հոգեւորապէս մխիթարելու հաւատացեալ ժողովուրդը կենաց բանին քարոզութեամբ:

Մեզի համար հետեւեալ թուականներէն որեւէ մէկը յարմար է:-

Սեպտեմբեր 14-15, 21-22, կամ 28-29

Եթէ վերոյիշեալ թուականները անյարմար են Ձեզի, հաճեցէք մեզի գիտցնել Ձեզի յարմար եղող թուական մը, որ ըստ այնմ կատարենք մեր պատրաստութիւնները:

Սպասելով Ձեր բարեհաճ պատասխանին, մնամ որդիական ակնածանօք եւ մտաչելով ի համբոյր Ձեր Ս Աշոյն,


Հովիւ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29891

Օգոստոս 19, 1986

Արժանաշնորհ
Տ.Վարդան Բհնյ. Տէր Ասատուրեան
նիւ Պրիթըն.

Սիրելի Տգր Վարդան,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք ձեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք ձեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով ձեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29228
Մարտ 6, 1986

Արժանաշնորհ
Տ. Վարդան Ա. Քհնյ. Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք Փետրուար 11, 1986 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 26ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Չարլզ Յովսէփեան
Հրաչ Ազարիկեան
Հարրի Հուկաս
Ռիչըրտ Գալայճեան
Էմիլ Մօսի



ԱՐՄԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՄՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30139
Մարտ 3, 1987

Արժանաշնորհ
Տ. Միքայէլ Ա. Զհնյ. Պուրօ
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախագահ ծխական խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայէլ,

Ստացած ենք Փետրուար 9, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 25ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հարի Տէր Ասատուրեան
Կարի Յովհաննէսեան
Ժան Պաղտասարեան
Փիթըր Պաղտասարեան Կրտ.



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30376
Մարտ 10, 1988

Արժանաշնորհ
Տ. Միքայել Ա. ԲՈՆՅ. Պաթեքո
Հովի Ա. Յարութիւն Եկեղեցոյ
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայել,

Ստացած ենք Փետրուար 24, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 31ին գումարած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանձնէք փութով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Կրէկ Արքահամեան
Ժան Մայնանեան
Ռոզ Մօսի
Կայ Սիմոնեան
Փիթըր Պաղտիկեան, Երէց



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԷԿՑՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 30749
Մարտ 10, 1989

Արժանաշնորհ
Տ. Միքայել Ա. Քհնյ. Պաթեթո
Հովի Ա. Յարութիւն Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Նի Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայել,

Ստացած ենք Փետրուար 19, 1989 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 29-ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնատու գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ա. Եկեղեցոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Էմիլ Մոսի
Հարրի Ղուկաս
Կիվըն Յոսիկեան
Ռապրոթ Երրիկեան